

բարազում հազար առաւ է և մեծ գումարով ցորին գնողներն էլ կան։

ՇՈՒՇՈՒՅԺ մեզ գրում են, «Մինչև որ հայոց դպրոցը թշուառ դրութեան մէջ է և երեք շուտով կը փակվի, քաղաքում բացվելու է բնական դպրոցը երեք դասարանով։ Բնական աշակերտներ կան, որոնք անհամբեր սպասում են նրա բացվելուն։ Բացի սրանից բացված է քաղաքային դպրոցի կից մի արհեստական դասարան, որի համար կառավարութիւնը տալիս է 500 ռ. տարեկան, իսկ անտառապետը ձրի տաղձ է տալիս։ Արդէն ստորագրութիւն է բացված և ներկայացուցներ են տրվում յօգուտ այդ դասարանին։»

ԵՐԵՎԱՆԻՅԺ մեզ գրում են, «Բնական բոլոր հայոց դպրոցները մի շորս հինգ տարուց յետոյ փոքր առ փոքր կը փակվեն, որովհետեւ էջմիածինը մեր գաւառական դպրոցները բոլոր եկամուտները փոքր առ փոքր առնում է և կենտրոնացնում է վանքի մէջ։ Այդպիսով էջմիածինը նպատակն է որ քիչ ժամանակից յետոյ Անդրկովկասի մէջ ոչ մի հայոց դպրոց չը մնի, բացի էջմիածնի ճեմարանից, իսկ մեր հայոց երկտասարդութիւնը ստիպված կը լինի ուսում առնել միմիայն պետական դպրոցներում, երբ ազգային դպրոցները, էջմիածնի շնորհով, բոլորն էլ կը փակվեն։ Արդէն Երևանի և Շուշու դպրոցները սկսում են ենթարկվել այդ վիճակին։ Ներքից կը գայ և այլ դպրոցներին և ներսիսեան դպրոցներին։»

Հինգշաբթի, յուլիսի 16-ին Արծրաւու թատրոնում մասնակցութեամբ Ա. Գալստեանի յօգուտ պ. Աղայեանի կը ներկայացնուի «Սէր և նախապաշարմունք» կոմ. 3 արար. թարգ. Ա. Բարանեանի և զաւելու։ Այդպէս է 8½ ժամին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՒԱ

Արագիւնների մէջ հրատարակված է համայնքների ժողովի անդամ յայտնի Բրէդլայի և Կլարստոնի գրադրութիւնը առաջինի յայտնութեան անիթով, որ նա մտադիր է իր տեղը բռնել համայնքների ժողովի մէջ և մասնակցել նրա նիստերին։ Եթէ Բրէդլայ կը գայ իր կուսակիցների հետ, վերջիններին չեն թոյլ տայ մտնել պարլա-

պատճառներից մէկը, որ ունեցել է քիչ թէ շատ նշանակութիւն առաջուայ ժողովների տուած աննշան օգուտների վրա, այդ այն է, որ ժողովների պարագմանց ցուցակը ուղարկվելու են եղել զիւղական ուսուցիչներին շատ ուշ և նետակապ նրանք նոյնպէս շատ քիչ ժամանակամիջոց են ունեցել նախապէս մտածելու առաջարկած հարցերի վրա, իսկ կարգաւ ինչ և ինչ լաւ պատրաստվելու համար—բոլորովին անկարելի է։

Չարթուցած հարցերի քննադատութեան համար պատրաստակցութիւն չունենալու պատճառաւ, վէճերը ժողովներում եղան առանց որ և ինչ սխառմանի, անդադար անցնելով մի հարցից դէպի միւսը, այդ պատճառով և ժողովի անդամները չեն կարէին որոշելու հետեւեալի, իսկ նկատուողութիւններ եղան շատ քիչ, զարթոնցած հարցերի քննութեան համար շատ քիչ ժամանակ էր որոշված։ Բացանկով այդ նկատուողութիւնները ժողովների կազմակերպութեան վերաբերմամբ, դառնաւ այժմ ուսուցչական ժողովի պարագմանց ընթացքին։

Յունիսի 2-ին, ժողովրդական դպրոցների ղրկելու մի համառօտ ճառից յետոյ, որով նա ցոյց տուաւ ներկայ ժողովի նպատակը, Պետերբուրգի քաղաքային դպրոցների ուսուցիչներից մէկը կարգաց իր ընթերցաւ դասական այն բոլոր ձեռնարկների և գործիքների մասին, որոնք գործ են ածվում Ուլինսկու Ռոժնոե սլո-վո-ի ա. տարին անցնելու ժամանակ։ Բէֆերենտը իր զեկուցման մէջ նախ և առաջ յայտնեց այն միտքը թէ՛ գրագիտութեան որ եղանակներն են աւելի գործածական և դրանցից որք Վարելի է աւելի յարմարագոյն համարել Բէֆերենտի կար-

մենտի բակը, իսկ Բրէդլային կը թողնեն մտնել պարլամենտի անցքերի մէջ, իսկ դա՛հի՛՛՛՛ ներս չեն թողնի։ Պարլամենտական ուստիկաններին օգնելու համար պօլի-ցիականներ են հրաւիրված։

Պարլամենտի անդամներից շատերը չափազանց անբաւական են, որ Վինգբորի պարկի վերակացու իշխան խրատիան վերջին զօրախաղի ժամանակ պարլամենտի անդամների համար առանձին տեղեր չը պատրաստեց։ Համայնքների ժողովի անդամներից մի քանիսը ժողովի մէջ այդ առիթով յարձակվեցին ոչ թէ միայն կառավարութեան, այլ և թագաւորական տան անդամների վրա։

Մայո կոմսութեան մէջ երկու կալուածատերերի վրա հրացան արձակեցին։ Երկուսն էլ վիրաւորված են՝ մէկը թեթեւ, իսկ միւսը մահացու կերպով։ Յանցաւորները կալանաւորված են։

ՀԱՅՔ ԵՒ ՅՈՅՆՔ

Մայրաքաղաքի Յոյն հասարակութեան գլխաւոր լրագիրը՝ Ն. Ե. Ո. Ղ. Ո. Ս. որ ամբողջ Թիւրքիոյ մամուլն ալ գլխաւոր գործերէն մին է, Պատ. Տ. Տիմիթիոս Չոլաքիտի վերջին աշխատութեան վրայ, զոր անցեալ օր ծանուցեց, հետեւեալ խորհրդածութիւնն հրատարակած է, յորում համակրալից գիտողութիւններ կան Հայոց և Յունաց յարաբերութիւններուն վրայ։

«Պ. Տ. Չոլաքիտի ըստ ամենայնի կարեւոր և նոր գործն, որոյ վրայ մեր պաշտօնակիցը նախ քան զմեզ գրեցին, մեծ պատիւ կը բերէ թէ՛ աշխատասիրողին և թէ՛ մեր համագլխի հասարակութեան, որ ուշի ուշով ընթեռնելով զայն, կրնայ այսուհետեւ անախիտ ընել աշխատութիւնն ծագած նախապաշարմունքներ, որք՝ որոմանց նման խառնուելով հին ժամանակաց աստուածաբանական աւելորդ անընթացութեանց, հերձուածներ յառաջ բերին և կըբայր ազդեր բաժանեցին. ազգեր, որք նախ քան զԳրիստոնէութիւն մաքառած չէին բնաւ ընդ միմեանս, և որք՝ կը թուէ թէ սահմանեալ էին սիրոյ Աւետարանին գալուստէն»

Ժիզով աւելի յարմարն է սնտեալական եղանակը, այդ եղանակով յօրինած են արդէն շատ դասագրքեր և դրանց ընտրութեան մէջ ուսուցիչը բոլորովին ազատ է։ Բէֆերենտը կանգ առաւ միայն երեք դասագրքերի վրա—Պատուստի, Ուլինսկու ու Բունակովի։ Այդ դասագրքերից նա աւելի յարմարագոյնն է համարում Ուլինսկու դասագրքը։ Պատուստի դասագրքը նրա կարծիքով չէ կարելի բոլորովին բաւականացուցիլ համարել, որովհետեւ դասաւարտութեան ժամանակ անկարելի է պատշաճաւոր ընտրողութիւններ անել դասական գործիքների մէջ, իսկ Բունակովի դասագրքը բոլորովին նման է Ուլինսկու դասագրքին։ Բացի դրանից, Բունակովի թոյլ կողմը կայանում է նրա մէջ, որ նախ և առաջ երեքսոյց նա ծանօթացնում է միայն 12 տառերի հետ ու վարժութեան համար այնպիսի բառեր է հնարում, որոնք անմատչելի են երեքսոյց հասկացողութեանը ու մի և նոյն ժամանակ հնարած բառերի մէջ չը կայ ներքին կապ։ Այնու ամենայնիւ, նա մի և նոյն ժամանակ այդ բոլոր թերութեանց հետ Բունակովի դասագրքի մէջ գտնում է այնպիսի արժանաւորութիւններ, որոնցից զուրկ է Ուլինսկու դասագրքը, այն է՝ առաջնութիւն խօսակցութիւնները լինում են առարկայական—առարկաների միջոցով, իսկ երկրորդում—պատկերների, նկարների միջոցով։ Բունակովի դասագրքի անյարմարութիւններից մէկն էլ այն է, որ նրա դասագրքը վերջացնելուց յետոյ ստիպված ես լինում անցնել Ուլինսկու «Ռոժնոե սլո-վո» դասագրքին։ Բէֆերենտը իր զեկուցումը եզրափակեց նրանով թէ՛ գրագիտութիւնը պիտի անցնել Ուլինսկու գրքով, կանգ առնելով Ուլինսկու դասագրքի վրա, նա

յետոյ մարտնչիլ խրարու հետ այնպիսի գաղափարաց համար, որք դարուց ի դարս անմեկնելի մնացած են և պիտի մնան յաւիտեան։

«Այսօր՝ ամենքս կը զարմանամք՝ Հայք և այլ Ուլինսկու, թէ ո՛րպիսի այլանդակ պատճառաւ չեմք միացեալ, քանի որ միջնորմ մը չենք տեսներ ընդ մէջ, իբր ո՛ր է և պատճառ, և եղածն ալ փոսած և ոչինչ իսկ է։ Մեր Հայ եղբարք կը կարծուին ցարդ իբր դաւանողք զմի բնութիւն, սակայն ոյս հակառակամարտ վիճին մէջ այնքան նրբութիւն կայ, որ ցարդ իսկ ո՛չ աստուածաբանական հանճարն և ո՛չ այլ զրաբանութիւնը կարող չեղան բացատրել այս նրբութեան մեկնիչ սահմաններն, և բաժանումը՝ թէեւ կայ՝ սակայն բոլորովին անհասկանալի է անոնց, որք իրերը կը քննեն պատմական, գործնական, դրական և աւետարանական օգտակար տեսակէտով մը։

«Հայկական Եկեղեցւոյ Ս. Մկրտութեան կանոնաց ընթերցումն ուրախացուց միանգամայն և վշտացուց զմեզ. մի կողմանէ, մինչև յարտասուս փռնեցանք այս արարողութեան վսեմութեանն և մերինն հետ նորա ճիշդ նոյնութեան վրայ, և միւս կողմէ, դարձեալ մինչև յարտասուս վշտացանք, որ հին դարու մի անմտութիւնը բաժանեց այսպէս զմեզ այն ազգէն, որոյ անունն ու պատմութիւնը բերկրութեամբ կընթեռնուենք և իբրեւ պարտք կուսնինք՝ Քրիստոսէն առջի մեր անմահ հարց մատենից մէջ։

«Հայոց Ս. Կաթողիկոսին ընդ Բիւզանդեան կայսեր գրակցութիւնը, զոր այս առաջին անգամ մեր լեզուին թարգմանուած կը տեսնենք և Հելլենական այնքան բառից կիրառութիւնն Հայոց եկեղեցւոյն մէջ՝ այնպէս սերտիւ կը զօդեն զմեզ մեր Հայ եղբարց հետ, որ միութեան ժամուն սպասող ո՛չ ոք կարէ սպասել այլ ևս (զի արդէն իսկ է այդ ժամանակը)։ Վասն զի Հայք չեն այն ազգերէ, որք կրնան կարծել թէ երջանիկ են պատմութիւն չունենալով, ընդհակառակն՝ երջանիկ են նոքա, զի ունին պատմութիւն։ Նրանի՛ թէ Եւրօպոյց և կայսերական պատկառելի կառավարու-

սկեց թուել այն գործիքները ու ձեռնարկները, որոնք անշուշտ կարեւոր են «Родное слово» ա. տարին անցնելու ժամանակ։ Բէֆերենտի կարծիքով բոլոր մինչև այժմ հրատարակած ձեռնարկներից ոչ մէկը չէ կարող կատարեալ կերպով բաւականութիւն տալ Ուլինսկու պրօգրամային։ Ձեռնարկների ու գործիքների մի յարմար կօլ-լեկցիա կազմելու համար ստիպված են եղել շատ զգուշ ընտրողութիւններ անել նրանց դասական հրատարակութիւններից և մինչև անգամ մասամբ նորից կազմել։ Այն ժողովածուի մէջ, որ պատրաստած է եղել Մոսկուայի հանդիսի համար, մտել են Չամխուրովսկու, Գաշտի, Վիլկէի, Շրէյքերի, Լէյտմանի, Ֆէնուի և Волено-Экономическое общество-ի հրատարակած նկարները։ Մի և նոյն ժամանակ Բէֆերենտը նկատեց թէ՛ նկատողական դասաւարտութեան ժամանակ աւելի լաւ է և յարմար նկարներ գործ ածել, քան թէ առարկաներ։

Կորանից յետոյ կարգաւիցեալ և մի ընթերցում այն գործիքների մասին, որոնք գործ են ածվում Ուլինսկու «Родное слово» բ. տարին անցնելու ժամանակ։ Նախ և առաջ Բէֆերենտը յայտնեց այն միտքը թէ՛ հարկաւոր է արդեօք Ուլինսկու գրքից զատել այն բոլոր յօդուածները, որոնք վերաբերում են աշխարհագրութեանը (міровѣдѣніе) և դրանց անցնել բոլորովին առանձին, որպէս զի դրանցով կարելի լինի աշակերտաց հաղորդել բնական գիտութիւններ, թէ անցնել դրանց բացատրական ընթերցանութեան հետ միասին Բէֆերենտի կարծիքով այդ յօդուածները պիտի կարգաւիցեն միասին։ Այնուհետեւ նա տնջաւ այն գործիքների քննադատութեանը, որոնք գործ են ածվում Родное слово-ի բ. տարին անց-

թեան կողմէ մտադրեալ բարենորոգումն. ընէ և ընդհանուր Արեւելից Խաղաղութեան յետոյ, պաշտօնապէս հնչէր սերտ եղբայրակցութեան ժամն, որոյ զալուստն յաջողապէս կաւետեն այնպիսի բանասիրական և պատմական երկեր, որպիսիք են Պ. Տ. Չոլաքիտիսի և նմանեաց երկատիրութիւնը։»

(Մատիս)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պօլսո, 3 յուլիսի

Այս անգամ էլ մի քանի խօսք մեր այլակրօն համարիւնների վրա։ Հեռագիրներից գիտեք արդէն, որ Հասունի տեղը ընտրվեց պատրիարք-կաթողիկոս Ազարեանը. հայ-կաթողիկոսների այս ընտրութեան մասին կարելի է միայն ինչիւ առածը՝ промѣнать кукушку на ястреба. Սա թէպէտ ազգաւ զուտ հայ է, բայց հոգով և համոզմունքներով աւելի մոլորանդ, աւելի եղուխ, աւելի ազգատեաց քան թէ քաղեացի Հասուն կարդինալը։ Հերթէ բերել միայն հետեւեալ նախաւոր կերպով արտասանած խօսքերը, ցոյց տալու համար թէ ինչ արարած է տաճկապ կաթողիկոսների նոր առաջնորդը. հայոց ազգը միշտ եղել է կրօնական ազգ (?), մանաւանդ նա պիտի մնայ այժմ և այսուհետեւ խստիւ կրօնական, վասնորոյ ես ոչ կարող եմ ինքս հասկնալ և ոչ ձեզ հասկացնել թէ ինչ ասել է հայկական ինքնօրէն վարչութիւն և այլն։ Ան ինչպիսի ճառով (ի հարկէ թիւրքերէն լեզուով) պատուէ ց իր ստորագրեալների ժողովը նորնախոր հայ եղուխ-կաթողիկոսը։ Արեւմտ-ստորնախոր քառն տարի չանցած կը տեսնենք, որ Կ. Պօլսի յիսուն հազար հայ կաթողիկոսներ կը դադարեն իրանց հայ կոչել, ասվելով լատին, արաբ, եգիպտացի, բայց ոչ հայ։ Ի՛նչ ոչխարային յատկութիւն ունեն բանականութիւն ունեցող արարածները ես. մի հատ անպիտան և կեղտոտ եղուխ կարող է պղծել ամբողջ մի հօտ...։

Ի՛նչ կասէք արդեօք թէ ցոյց տաւ, որ այսպիսի մի եղուխ, փոխանակ ըստ արժանոյն գնահատվելու այստեղի հայ մամուլից, նա միայն վառ և ոգևորված ներքոյնի է ստանում ինչ է պատճառը—Ազարեանի տուած փարան, փարայով կարող էք առնել այստեղ յիշատի քանակութիւն ուղեք խլով, պատիւ, համոզմունք, համակրութիւն և այլն։ Այսպիսի մամուլով հը նարին է արդեօք ազգային ժողովին կամ որ և է ընկերութեան մի քայլ յառաջագիտութիւն ա-

նելու ժամանակ։ Նրա կարծիքով իբրեւ գործիքներ Родное слово-ի բ. տարուայ համար—կարող են համարվել նկարներ, բայց մի քանի դէպքերում իբրեւ գործիքներ կարող են համարվել նոյն իսկ առարկաներ, նա մանաւանդ այն յօդուածների ընթերցանութեան ժամանակ, որոնք ցատկովում է որ և ինչ մի արտադրութիւն, որի նախի համար, «какъ рубашка выросла въ поше»։

Այնուհետեւ Բէֆերենտը սկսեց խմբագրել ինչպիսի գրքի բոլոր յօդուածները, բացառել դրանց իւրաքանչիւր խումբի ընդհանուր միտքը և ցոյց տուաւ թէ աշխարհագրութեանը որպիսի տեղեկութիւններ կարելի է հաղորդել այդ յօդուածներովը։ Վերջապէս նա կարողաց մի ցուցակ այն գրքերի, որոնց կարելի է տալ աշակերտաց կարգաւոր այդ տարում և որոնցից կարող է օգտվել ինքն ուսուցիչը։

Ընդ չը պիտի մի առ մի թուենք այստեղ այն բոլոր գործիքները, որոնք առաջարկում էին երկու Բէֆերենտները, որովհետեւ բոլորը առանց բացառութեան չէ կարելի համարել բաւականացուցիչ ու մինչև անգամ հարկաւոր, իսկ երրորդ այն պատճառով, որ այդ տեսակ ժողովածու իր սատակի թանգութեան պատճառով անմատչելի է մի համառոտ ժողովրդական դպրոցի ժողովրդական գործիքները, գործիքները, որոնք ժողոված են Родное слово-ի ա. և բ. տարին աւել ընթերցանութեան համար, 400 լուրջ աւել փող արժէ։

Իսկ ինչ վերաբերում է զպատկառական գործիքների դասաւարտութեանը, նախէ քար պիտի ասել, որ ընդհանրապէս այնպէս բացանողները չը կարողացան դրանց ժողովել ու կարգի բերել, որ կարելի լինէր ասլ մի պարզ հակացողութիւն minimum-ի կամ

նեկ, երբ այս մամուլն է, որ ապակառնում է մըտ-
քերն ու զգացմունքը:

Ազգայնականի ոչ պակաս անպիտանը հայ-բողո-
քականների կաթողիկոսութիւնը փնտրող յայ-
տնի Բայեռականն է. այս արարածն է, որը ըս-
տացաւ նորիս Թիւրքիայի մի մեծ պարզ և նո-
րա համար, որ նա կարողացաւ ցոյց տալ Սա-
յի-փաշային զանազան հնարքներ: Կիարքները
Արեւելի-փաշայի ձեռքով այստեղ ուղարկած 52
բերդը բնիկն ազատելու: Արդիւնեւ Բայեռ-
ականը ինքը Կիարքները առաջնորդն է, փաս-
տոյ նորա սովորացրած ճանապարհները և
տուած վկայութիւնները կարողացան լինել փըր-
կութիւն հարկաւոր որ հայ ընտանեաց դահլճ
քիւրդերի համար: Տեսնելով այս ամենը մարդ
կրէին մնում է մոլորված, ինքը իրան հարցնե-
լով. «միթէ այս ազգը կարող է վերականգնե-
լու» երբ նորա զարգացած անդամները այսչափ ա-
պականված են: Անգլիայից կը գայ մի նոր մի-
սիոնաւ, նորա գիրքը բնիկն առաջի մարդը
հայ պիտի լինի: Ամերիկայից կը գան քարոզիչ-
ներ՝ նոյնը: Հոսմից կուղարկվին այստեղ եղբիւր-
ներ Հայաստանի մէջ հաստատուելու համար,
նոցա հիւրընկալողները և հայերէն սովորաց-
նողները այստեղ հայեր են. այս ինչ գեազանին,
այն ինչ մարդուն լրտես և աղբուրաց գործիք է
հարկաւոր,—անշուշտ այդպիսինը պիտի հայ լի-
նի. դա ինչ թշուառութիւն է մի խեղճ ազգի
համար, Տէր Աստուած... Իսկ ո՞վ կարող է լի-
նել ազգի միակ բարեբարը և պահպանող ինչ-
տակը այսպիսի դէպքերում, եթէ ոչ մամուլը և
նորա սթափեցուցիչ ազդեցութիւնը: Բայց ո՞ր
է նա և ինչ է....

Ան այսպիսի ճգնաժամի մէջ է գտնվում
ազգը, երբ մի խումբ դաւաճանների մի անպի-
տանի առաջնորդութեամբ ստորերկրեայ ին-
տրիգներ են անում այստեղի ազգային ժողովի
մէջ Ներսէս պատրիարքին տապալելու և նորա տե-
ղը իրանց շահերին գործիք և իշու հպատակ ընտ-
րելու համար: Նրեակայեցէք Ներսէսի համբե-
րութիւնը, երբ նոյն անձն ամեն կեղտոտութիւն-
ներ անելով, երեսանց Ներսէսին բարեկամ է
ձեռնում և պատուիրակ ընտրվելով ինդուում է
նորան իր պաշտօնի վրա մնալու: Հիմարտ,
տեսնելով այսչափ նենգութիւն և կեղծաւորու-
թիւն այս մարդիկներին բնաւորութեան և գործե-
րի մէջ, մարդու միտքը դալիս են հետեւալ մըտ-
քերը:—Հայոց հարցը յաջողութեամբ լուծվելուց
յետ, առաջարկել կանգնացնել Հայաստանում
մօտ առ մօտ երկու արձան. մէկը մարմարեանից
Ներսէս պատրիարքին, միւրը փոսած փայտից
այստեղի ազգային ժողովին, որը չը նայելով
Սոսիւնի նմանների մշտական հիացմունքին, հա-
ղիւ արժանի է միայն այդպիսի մի յիշատակա-

րանին իր քսան ու մէկ տարուայ գործունէու-
թեան համար...

Կ. Պօլսի Հայերը այնչափ տգէտ և անկարող ա-
րարածներ են, որ նորիս առաջնորդները միւր
ասում էր. «չառ լաւ, դիցուք թէ Հայաստանը
անտեսապէս ուսումնասիրեցինք և իմացանք նո-
րա պակասութիւնները, դորանից յետ ինչ պի-
տի անենք»: Տեսէք թէ որչափ կուրօքն և խա-
րխիւրդ են գործ տեսնում սոքա, ո՞րչափ ան-
ընդունակ են գործնականապէս մի բան յառա-
ջացնելու, որ երբ մտածում են թէ կարող են
երես առ երես հանդիպել իրական Հայաստանի
հետ, այնչափ խորթ է սոցա համար այդ իրա-
կան երկիրը, որ բոլորովին բնականապէս հարց
են առաջարկում. «չաւ, դիցուք թէ տեսանք
իրական Հայաստանը, հապա ինչ պիտի անենք
յետոյ»: Ահա ինչ կը նշանակէ ոչ խեղճ և
դատողութեամբ ապրել և գործել, այլ միայն
եւ րեակայ ու թեւեւ և եւ աւել ու թեւեւ: Երբ որ
մի մարդուն, ծեր թէ պատանի, կը սկսեն գովել
այս տեղ, միշտ կասեն միայն թէ՛ նա խիտ
վառ վառ է և եւ աւել ու թեւեւ մարդ է: Այդ է
պատճառը. որ երբ մէկին մի աննպատակ փո-
ղութիւն կանես միւսի համար, քեզ կասեն.
«աղբար, նա պոյտ է»: Այսպիսով յայտնվում է,
որ այստեղ ամենքն էլ պոյտ են, բայց թէ
պոյտները միասին հաւաքված ինչ մի ուղղ-
ութեան արժանի երկտող բանաստեղծութիւն
գրեցին՝ այդ մասին մի հարցնէք: Աւելին երբ
Կ. Պօլսի գործիչները բաղկացած են այսպիսի
ֆանտազիոսներից, միթէ Մշակը իրաւացի
էր գրծումով սոցա միշտ բռնաւորի, «գար-
դակ» և «անպէտք» անուններով. թող խօսե-
սոցա ամենքի հարազատ տիպար պ. Սոսիւնը,
որը սիրում է այդչափ նիսիս փիլիսոփայու-
թիւններ անել... խօսելով «յանուն» Վիկտոր
Հիւգօյի....

Թէ որչափ ինկյալաւից զուրկ են սոքա, ա-
նա մի թարմ օրինակ եւ. տեղիս հայ լրագիրնե-
րից միւր արտատպելով Մշակից Պետերբուր-
գում կազմվող ընկերութեան համար Հայաստա-
նի քարտէզը, թէ չը գիտեն ինչ չինել տալու հա-
մար, ասում է. «ինչ կը լինի, որ մեր մէջ էլ (Կ. Պօ-
լս) կազմվէր այդպիսի մի ընկերութիւն հայոց
մեծ պատմութիւնը գրելու համար»: Մէկը ասէր,
միթէ քիչ պատմութիւններ են գրվել և քիչ հա-
տոր լցվել փոսած անցեալով, բայց ո՞վ է ձեռ-
նարկել մի քննադատական բան գրելու հայոց
պատմութեան վրա. եթէ կարծում են թէ Հա-
յաստանի տնտեսական ճիշդ վիճակագրութիւն
և ուսումնասիրութիւն անելը շատ ևս մի աւել-
լորդ բան է, գոնէ առաջարկելն ընկերութիւն
կազմել քննադատական պատմութիւն գրելու
համար: Բայց ում կասես այսպիսի բաներ. սո-

ուրիշը: Աս իր գեկուցման մէջ նախ և առաջ
ցոյց տուաւ այն նպատակը, որպիսին նայում է
ժողովուրդը ընթերցանութեան վրա ներկայումս:
Ճողովուրդը գրքի մէջ փնտռում է կամ հետա-
քըքալան մի բան, կամ թէ նայում է նրա վրա
կրօնական կէտից. բայց նա չէ նայում նրա վրա
իրբն մի ուսուցչի, մի առաջնորդողի վրա, բայց
այն ինչ դպրոցը պիտի աշխատի ձգտել այդ
վերջինիս: Այդ տեսակէտից նայելով Բէֆերենտը
ասաց թէ այդ նպատակին ամենից աւելի կարող
են բաւականութիւն տալ այն բոլոր բնական գի-
տութիւններին վերաբերեալ յօդուածները, որոնք
գտնվում են Ռւսիոյում «Родное слово годъ 3-й»
գրքի մէջ: Կենդանիների վրա խօսելու կամ
պատմելու ժամանակ, Բէֆերենտի կարծիքով,
պիտի ուշադրեալ երկու նպատակ— դիտական ու
տիկնալական: Կենդանիների վրա խօսելու ժա-
մանակ գիտնական նպատակով պիտի ցոյց տալ
թէ կենդանու գործարանների կազմութիւնը ինչ
կապ ունի նրա կեանքի հետ և ինչ ընդհանուր
իդէա կա կենդանիների գործարանների կազ-
մութեան մէջ: Տեսնելով նպատակը նկատի
ունի ցոյց տալ այն օգուտը, որ կարելի է ստա-
նալ այս կամ այն կենդանուց: Վերջինից յօ-
դուածների ընթերցանութեան ժամանակ, Բէֆե-
րենտի կարծիքով, պիտի գործ ածել հետեւեալ
գործիքները:—Կենդանիներ անցնելու համար —
նկարներ, իսկ աւելի լաւ է — եթէ կա կարո-
ղութիւն — կենդանիների չափերը, իսկ
անկարգանութիւնից անշուշտ, նա մանաւանդ
կուրսի սկզբներում, տունկերի թարմ ու կեն-
դանի օրինակներ: Նկարները այդ դէպքում
նշանակութիւն չունեն, որովհետեւ նրանք չեն
տալիս իսկական գաղափար տունկերի մեծու-

ցա գույնը չէ կարելի փոխել և քամիի տեղ
մի կտոր ուղեղ մտցնել....

Այս ամբողջ բանալի մէջ ապրելով, գոնէ
միտքարկան է տեսնել, որ հայոց խնդրի հա-
մար քաղաքական հանգամանքները շատ բարե-
յաջող են. մի կողմից Ֆրանսիայի յարաբերու-
թիւններն են խանգարված տաճկաց հետ, միւս
կողմից Անգլիայի: Կրեթէ ամբողջ Եւրոպան
զգուհեց իր սեփական աչքերով տեսնելով Մի-
հատ-փաշայի դատի մէջ թէ որչափ սնիրաւու-
թիւն և կամայականութիւն է տիրապետում
Թիւրքիայի «օրէնք» և «դատաստան» սոված
հաստատութիւնների մէջ: Սրանով կարող են
աւելի համոզվել Հայաստանի թշուառութեան
մէջ: Այս ամենի հետ միասին, հարկաւոր է, որ
Ներսէս պատրիարքը շատ իրաւասով բարոյա-
պէս իր ազգից, մանաւանդ ուսանալից, ո-
րոնց համակրութեան շատ գին է դնում նա:

Մի քանի խօսք էլ Թիֆլիսի թատրոնի մա-
սին: Ասեցէք խնդրեմ, այդ ինչ, հակահեղափո-
խականների նման, մի հալածանք է այդտեղ
գերասանունների դէմ, որոնց խմբովին Կ. Պօ-
լս վաղկը այստեղ շարաքնդելով խօսելու նիւթ
է դառնել հարկաւոր ընտանեաց մէջ: չը լինի
թէ ամեն բան մօղա լինելով Թիֆլիսում, այս
անգամ գերասանունների մօղան էլ անցաւ:
վաղ այդպիսի կառավարիչների զլինիս: Այստեղ
շատ են խօսում հիմա Կ. Պօլսի ամենապարտի-
կ և տաղանդաւոր հայ գերասանունի տիկին Հրա-
չիայի Թիֆլիս գնալու վրա, որին, ասում են,
հրաւիրել են այդտեղ. խեղճ Կ. Պօլսի անմեղ
գոհնը, որ նորութիւնով յափշտակվելով չը զի-
տէք թէ ինչ պատգիւրի ձեռքը պիտի ընկ-
նէք.... Ինչ և իցէ, որչափ էլ ծանր զոհողու-
թիւններ արած, յետ դառնան Թիֆլիսից այս-
տեղի խեղճ միամիտ բնասէր երկտաւար կա-
նայք, դարձաւ ձեզ մեծ սիրալիր է սպասում
եթէ յաջողվեց տեսնել ձեզ տիկին Հրաչիային:

Այստեղի լրագրութեան մէջ ոչինչ նորութիւն
բացի միայն այն եղբիւրական ուղղութիւնը,
որը բուն է նա Ներսէսի հրաժարականի հար-
ցի մէջ. եթէր հայ թերթերի մէջ միայն Վրաս-
տեղի Լիֆերայք, արիւթիւն ունեցաւ անկեղ-
ծօրէն խօսել և ցոյց տալ ազգային ժողովի կեղ-
տառութիւնը, բոլոր միացածները դիտակցաբար
քողարկում են գործի բուն էութիւնը թիւրք
մամուլի յարձակմունքները պատրիարքի վրա,
կամ այլ այսպիսի յիմար բաներ պատճառ ցոյց
տալով պատրիարքի յուսահատութեան: Միայն
այն է միտքարկան, որ այստեղի մամուլը
սկսել է շարունակ յօդուածներ հրատարակել ի
նպատակ ընդդէմ Հայաստանի մէջ բռնելի գործ-
նական և տեխնիկային ուղղութեան: Այս կող-
մից ուղարկութեան արժանի են դոկ. Փեշթիմալ-

ձեանի յօդուածները «Մասիս» մէջ, որոնց ուղ-
ղութիւնը շատ մօտ է Վրչակի» յայտնած ուղ-
ղութեան: Չը նայելով սակայն այս զօրեղ պրո-
պագանդային, ճաւեր ու շրջաբերականներ շարու-
նակում են հրատարակվել Հայաստանի մանուկ-
ների անբար և միտքը կրթելու վերաբերմամբ.
Երբ ամբողջ ժողովրդի համակրութիւնը լրովին
նուիրված է գործնական ուղղութեան, ինչ պէտք
և կարիք կայ արդեօք յամառվել և «սրտի ու
մտքի» կրթութեան վրա ճաւեր գրել. չենք
հասկանում թէ այս մարդիկ ինչ են ուղում
անել....

Քանի օր է որ Մանկունին այստեղ զաւեշտա-
կան յօդուածների առարկայ է դառնել. Լիֆերա-
նից հեռագրում է այստեղի լրագիրներին հետե-
ւեալը. «Վեհափառ կաթողիկոսի հիւանդու-
թեան լուրը սուտ է և չափազանցաւոր»: Սոքա
էլ ամեն կողմից հարցնում են՝ եթէ սուտ է»,
«չափազանցաւոր» օրն է. եթէ չափազանցաւոր
է, ուրեմն սուտ չէ: Այս ամենը շատ լաւ, թէ
կուր ճշնեց սուտ լինի, բայց Երբ պիտի տան սո-
վելուց յանձնաժողովի հայիւր ու թէ հազար
ոսկու գումարի համար. չը լինի թէ Ման-
կունին ուրտել է այդ գումարով 300 եզ մա-
տաղ բերել իր կաթողիկոսութեան համեմու-
ժամանակ, կամ թէ չը լինի թէ Պետերբուրգի
«ազգասէրները արդէն խոսեմ» տնօրինութիւն
են արել այդ փողով Հայաստանի աշխարհազ-
րական տարածակը չինել տալ, սակայն. «էլ խօսմ
ոտը անցաւ, էլ ինչ հայիւր և հարկաւոր դառա-
զան յանձնաժողովներին»: Այս ինչ անգլիկ
ազգ ենք եղել մենք, Տէր Աստուած: Սովելուց
յանձնաժողովը կրկին գիտում է «Վրչակին»
այս մասին:

Գրիգոր Նիկողոսեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 յուլիսի Պետական
բանկի 50% տոմսով առաջին շրջանի ար-
ժէ 95 ռ. 75 կ., երկրորդ 94 ռ. 37 կ.,
երրորդ 94 ռ. 75 կ., չորրորդ 94 ռ. 37 կ.,
ներքին առաջին 50% փոխառութեան տոմ-
սակը արժէ 222 ռ. 75 կ., երկրորդ 222 ռ.,
արեւելեան առաջին փոխառութեան տոմսա-
կը արժէ 91 ռ. 75 կ., երկրորդ 91 ռ.,
62 կ., երրորդ 91 ռ. 75 կ., սակի 7 ռ. 82
կ.: Եւրոսաց 1 ռուբլ 1 ժողովի վրա արժէ
25,15 պէնս, ուսաց 100 ռ. Համբուրգի
վրա արժէ 215 մարկ 25 պֆ., Գարիգի վրա
արժէ 265 ֆրանկ 50 սանտիմ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

maximum-ի այն ամեն բանի, ինչ որ կարելի է
կամ ցանկալի է տեսնել ժողովրդական դպրոց-
ներում մայրենի լեզուի խելացի կերպով դասա-
տուութեան համար.— նրանք սուրին հանդիսա-
տեսներին գործիքներն ու ձեռնարկներն անկա-
նուն և անկարգ մի ժողովածու, որպիսին կարելի
է գտնել Պետերբուրգի խանութներում, առանց
պանի, առանց մի ձեռնարկող իդէալի: Չէր
զարձած ոչ մի ուղարկութիւն ժողովրդական
դպրոցի համար նախ և առաջ այն բոլոր գոր-
ծիքների վրա, որոնք գործադրվում են հայրե-
նագիտութեան դասերի ժամանակ, այսինքն
բնագիտութեան և աշխարհագրութեան դասերի
ժամանակ. նոյնպէս և այն գործիքների վրա,
որոնց կարող է ժողովել ու պատրաստել դպրոցի
համար ուսուցիչն ինքը: Այն ինչ բացատրվել է
նկարների կարեորութիւնը ժողովրդական դպ-
րոցներում, ցաւակցութիւն է յայտնվել, որ չը
կայ ծախու գրամների կողմնակա, յայտնվել են
զանգաւանք, որ չաջողվեց գտնել աղեղի մե-
ղելը, ուստի և ստիպված են եղել նրան փո-
խարինել նկարով. շատ խօսեցան նոր նկարների
մասին, Թուրքիոյ զանազան կողմնակներ, իսկ
մանկավարժական և ուսման նշանակութիւնը ու
նրանց գործադրութիւնը միաց առանց բացատ-
րութեան: Առհասարակ չէ կարելի չը ցաւել, որ
այդպիսի մի ազնիւ ու բարի գործ, որպիսին է
դպրոցական գործիքների ու ձեռնարկների հա-
ղէքը, չնորհիւ չը համապող և անփորձ անձանց
դառնում է ժամանակի մի անպատու և անար-
ապրելի կուրսաւ:

Իսկ այն բոլոր գործիքների համար, որոնք
գործ են ածվում «Родное слово, годъ 3-й»
գրքի ընթերցանութեան ժամանակ, խօսեց մի-

վրդական դպրոցում—նախ և առաջ պրոգրամմա
կազմել, յետոյ իսկ յետոյ դասագրքի ընտրութիւն
անել, թէ, ընդհակառակն, առաջուց դասագրքը
ընտրել, իսկ յետոյ կազմել պրոգրամմա: Այդ
հարցի վերաբերմամբ բազմատեսակ կարծիքներ
յայտնվեցան: Վիճարկանութիւնները եղան առանց
որ և իցէ սխտեմայի և յաճախ անցնում էին այն-
պիսի հարցերի, որոնք բոլորովին կապ չունեն
իսկական հարցի հետ: Վիճարկանութիւնների
մէջ մասնակցեցան մի քանի ժողովրդական
(գիւղական) ու քաղաքային դպրոցների ուսու-
ցիչներ, նոյնպէս և մի ուսուցչուհի, այդ վեր-
ջինս յայտնեց այն միտքը թէ՛ դասագրքի ընտ-
րութեան ժամանակ պիտի աչքի առաջ ունենալ
այն նպատակը, ինչ նպատակ ունի ուսումը.—
եթէ ի նկատի ունենք միմիայն գրագիտութիւն
սովորեցնել, այն ժամանակ հարկաւոր է առաջ
ընտրել դասագրք, իսկ եթէ ի նկատի ունենք
աշակերտաց դիտութիւններ աւանդել, այն ժա-
մանակ հարկաւոր է նախ և առաջ պրոգրամմա
կազմել, և ապա ընտրել դասագրք: Վիճար-
կանութիւնը այնքան երկար տևեց, որ միւս հար-
ցերը բոլորովին չը քննադատվեցան: Վերջում,
այդքան վիճարկանութիւններից յետոյ, ժողովը
դական դպրոցի գիւրեկտորը գուրս բերաւ հե-
տեւեալ եզրակացութիւնը — «նախ և առաջ
պիտի կազմել պլան, իսկ յետոյ ընտրել դասա-
գրք»: Մինք կարծում ենք, որ աւելի լաւ է
գործել ընդհակառակն, բայց մի է նոյն ժամա-
նակ կարելի է ցոյցնել կամ փոփոխել, եթէ ու-
սուցիչները կարելի կը համարեն:

(Կը շարունակվի)